Թշնամին շուտով դուրս կը շպրտուի մեր երկրից: Այն ժողովուրդը, որ կարողացաւ ձեռք բերել իր ազատութիւնը, որ դեռ նոր ճնշեց բոլշևիկեան խռովութիւնները, թոյլ չի տայ, որ տաճկական փաշաներին յաջողուի իրագործել իրենց դիւային ծրագրները: Հայաստանի կառավարութիւնը, իր հետ ունենալով յեղափոխական ժողովրդի կամքն ու վստահութիւնը, կանէ այն, ինչ որ իրենից պահանջում է պատմական վայրկեանը: Սակայն, ժողովուրդն ևս պէտք է լարէ իր բոլոր ուժերը: Տաճիկ զօրքերի առաջ մէ՛կ անելիք է մնում միայն — յաղթել կամ մեռնել: Մենք պէտք է յաղթենք:

Քաղաքացինե՛ր, որքան և աննպաստ լինեն պայմանները, թողէ՛ք ձեր անձնական գործերը: Ամէն ոք և ամէն ինչ պէ՛տք է յատկացուի Ֆրոնտին: Ո՛չ մի դասալիք չպիտի մնայ Հայաստանում: Ո՛չ մի երիտասարդ չպիտի նստի տանը: Ամէ՛ն ինչ զօրքի համար: Գիւղացի, բանւոր, մտաւորական, պաշտօնեայ, արհեստաւոր, ուսանող, կանայք — բոլորդ պէտք է նպաստէք մեր բանակին, որովհետև մի՛այն ամենքիս միահամուռ ջանքերով կը խորտակուի փաշաների գարշելի բռնակալութիւնը, և Հայաստանը բոլորովին ազատ կը լինի տաճիկ չովինիստների մղձաւանջից:

Ոտքի՛, ժողովուրդ:

Կեցցէ՛ Միացեալ և Անկախ Հայաստանը:

Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն

Կառավարութեան կոչը անմիջապէս արձագանգ գտաւ բոլոր կողմերից: Հրապարակային ժողովներ, բանաձևեր, թռուցիկներ, լրագրական յօդուածներ. — ամենքը նեցուկ կանգնեցին կառավարութեան թիկունքում: Իբրև նմոյշ, առաջ բերենք Սոց.-Յեղափոխ. Կուսակցութեան Հայաստանի Կոմիտէի հրատարակած կոչը հոկտ. 2-ին:

Կուով կը խլես fn իրաւունքը

Ընկերնե՛ր: Տաճիկ փաշաները, քիւրդ ու թիւրք հորդաների դլուխն անցած, ներս են խուժել մեր երկիրը: Բազմահազար հայ գիւղացիներ Կարսի շրջանից տեղահան են եղած ու կրկին դրկել են «դաղթականի» ցուպը: Հայ դեմոկրատիայի հաղիւ ապաքինուած վէրքը դարձեալ նորոգուել է, և առատօրէն հոսում է արիւնը նրա կրծքից: Նորից մեր ֆիզիքական գոյութեան խնդիրն է դրուած պատմութեան կշռաթաթի վրա:

Օրհասի այս ժամին Հայաստանի դեմոկրատիան մնացել է մենակ ու անօգնական: Երկու տարուայ քաղաքական անկախ կեանքի ընթացքում մենք չկարողացանք ունենալ դրսի այնպիսի բարեկամներ, որոնց օգնութեան վրա կարողանայինք յոյս դնել վտանգի ժամին: Չկան եւրոպական իմպերիալիստները, մեր այդ «հաւատարիմ բարեկամները»...ճաշկերոյթների ժամանակ: Չկան բարեկամներ և մեր հարևանների շարքերում: Հայ դեմոկրատիան այսօր իր ուժերով է, որ պէտք է ապահովէ իր գոյութիւնը և յետ վանէ արիւնռուշտ Թշնամուն:

Այսօրուայ յաջողութեան միակ պայմանը, ընկերներ, մեր դեմոկրատիայի բովանդակ ուժերի կազմակերպումն է հայրենիքի ինքնապաշտպանութեան գործի շուրջը: